8. ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմ

8.1. Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ (ծածկագիր՝ 63-2.2-33)

Իր լիազորությունների շրջանակներում համագործակցում է Մարզպետարանի համապատասխան ստորաբաժանումների, տեղական ինքնակառավարման մարմինների, Մարզում գործող հանրակրթական դպրոցների, երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունների, ոստիկանության և հասարակական կազմակերպությունների հետ: Մասնակցում է ընտանիքի, կանանց և երեխաների պաշտպանության թեմաներով անցկացվող սեմինարների, գիտաժողովների: Ստուգում է խնամակալության և հոգաբարձության մարմիններից ստացված տեղեկատվության ճշտությունը առանց ծնողական խնամքի մնացած երեխաների մասին: Կազմակերպում և ապահովում է կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաների ուսումնասիրությունը, կարիքների գնահատման հիման վրա տալիս է եզրակացություն երեխային մանկատուն կամ երեխային խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություն, կամ խնամատար ընտանիք, կամ որդեգրման հանձնելու մասին: Համակարգում է Մարզում գործող՝ կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաների տեղեկատվական բազան: Կազմակերպում և ղեկավարում է Մարզում կանանց հիմնահարցերի ուսումնասիրումը, դրանց լուծմանն ուղղված ծրագրերի մշակումը: Կազմակերպում և ղեկավարում է կանանց սոցիալական պաշտպանության նոր մեխանիզմների մշակումը և իրականացումը: Կազմակերպում և ղեկավարում է Մարզում գենդերային հիմնահարցերի ուսումնասիրումը, դրանց լուծմանն ուղղված ծրագրերի մշակումը: Կազմակերպում և ղեկավարում է կանանց առքուվաճառքի (թրաֆիկինգի) հիմնահարցերի ուսումնասիրումը, դրանց լուծմանն ուղղված ծրագրերի մշակումը: Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների ուսումնասիրման և կարիքների գնահատման հիման վրա խնամակալության և հոգաբարձության մարմին է ներկայացնում եզրակացություն՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին մանկատուն (բացառությամբ՝ այն դեպքերի, երբ անհրաժեշտ է պահպանել գաղտնիությունը), կամ երեխաների գիշերօթիկ խնամքի հաստատություն կամ խնամատար ընտանիք տեղավորելու մասին: Պարբերաբար լուսաբանում և ներկայացնում է Մարզի ընտանիքի, կանանց և երեխաների ոլորտի խնդիրներն ու ձեռքբերումները զանգվածային լրատվամիջոցներով:

Նշված թափուր պաշտոնն զբաղեցնելու համար պահանջվում է

* բարձրագույն կրթություն,
* սույն պաշտոնի անձնագրի 10-րդ կետի «ա» ենթակետում նշված համապատասխան աշխատանքային ստաժ (տե՛ս սույն հայտարարության 11.1 ենթակետին հաջորդող պարբերությունը),

* սույն պաշտոնի անձնագրի 10-րդ կետի «բ» ենթակետում նշված իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն,
* տարբեր տեղեկատվական շտեմարանների համակարգչային ծրագրերի շահագործման համար անհրաժեշտ գիտելիքներ:

Մրցույթը կկայանա 18.04.2014թ.՝ ժամը 14[00]-ին, խորհրդի շենքում (ք. Երևան, Տերյան 89):